Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-736-16.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՊՈՍՏԻԼՈՎ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կազմված և տրված պաշտոնական փաստաթղթերի՝ «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված ապոստիլով վավերացնելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) Ապոստիլ՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված թղթային կամ էլեկտրոնային հավաստագիր, որը հավաստում է պաշտոնական փաստաթուղթը ստորագրող անձի պաշտոնեական դիրքի, նրա ստորագրության, փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը:

2) Պաշտոնական փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, վարչական և այլ մարմինների, այդ մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև նոտարների կողմից իրենց պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում թղթային կրիչի կամ էլեկտրոնային ձևաչափով կազմված և տրամադրված փաստաթղթեր:

Հոդված 3. Պաշտոնական փաստաթղթերի ապոստիլով վավերացման գործընթաց

1. Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են Կոնվենցիային անդամակցող պետությունների տարածքում:

2. Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից կազմված և տրված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացման ենթակա չեն:

3. Հայաստանի Հանրապետությունում կազմված և տրված պաշտոնական փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից, բացառությամբ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման, հետախուզման և դատվածության բացակայության մասին տեղեկանքների, որոնք ապոստիլով վավերացվում են արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից:

4. Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ներկայացված պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացվում են արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից:

5. Պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու համար դիմում ներկայացնելու կարգը, ապոստիլի ձևանմուշը, տեսակները, վավերապայմանները, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը գործածելու, տվյալները պահպանելու, ոչնչացնելու ժամկետները և կարգը, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանը վարելու, օգտագործելու և տեխնիկական ապահովումը իրականացնելու կարգը, ինչպես նաև ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթղթերի ցանկը սահմանվում է արդարադատության և արտաքին գործերի ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարների համատեղ հրամանով:

6. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով և կարգով:

7. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու մասին դիմումին կից ներկայացվում են դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը:

8. Այլ անձին պատկանող պաշտոնական փաստաթուղթը երրորդ անձանց կողմից այն ապոստիլով վավերացնելու նպատակով դիմում ներկայացնելիս լիազորագիր չի պահանջվում:

9. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, եթե «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանում բացակայում են ապոստիլով վավերացնելու համար ներկայացված պաշտոնական փաստաթուղթը ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնավարման, պաշտոնեական դիրքի, ստորագրության, կնիքի կամ դրոշմակնիքի վերաբերյալ տեղեկությունները:

11. Սույն հոդվածի 10-րդ մասում նշված դեպքերում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից հարցում է կատարվում պաշտոնական փաստաթուղթը տրամադրած մարմնին՝ այն կազմող և հաստատող անձի վերաբերյալ տեղեկությունները, ստորագրության, կնիքի կամ դրոշամակնիքի նմուշները ստանալու նպատակով, որը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված փաստաթուղթը վավերացվում է ապոստիլով:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված մարմինները հայցվող տեղեկությունները տրամադրում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հարցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

13. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու ժամկետի երկարաձգման մասին դիմողը տեղեկացվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փոստային նամակով, կամ իր կողմից տրամադրված կապի այլ միջոցներով:

14. Ապոստիլով վավերացման ենթակա չեն՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարված փաստաթղթերը,

2) առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերը:

Հոդված 4. Օտարերկրյա պետության կողմից կազմված փաստաթղթի վավերականությունը Հայաստանի Հանրապետությունում

1. Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասու մարմինների՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իրենց լիազորությունների շրջանակներում տրված փաստաթղթերը, որոնք վավերացված են ապոստիլով, Հայաստանի Հանրապետության տարածքում համարվում են վավեր՝ առանց հյուպատոսական վավերացման կամ այլ լրացուցիչ օրինականացման:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված փաստաթղթերի ապոստիլով վավերացված լինելը պարտադիր է, եթե Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային այլ պայմանագրերով վերացվել, պարզեցվել է օրինականացման ընթացակարգը կամ փաստաթուղթը ազատվել է օրինականացումից:

Հոդված 5. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու դիմումի մերժման հիմքեր.

1. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու դիմումը մերժվում է, եթե՝

1) փաստաթուղթը պատրաստվել կամ հաստատվել, կամ կնիքվել է դրա լիազորությունը չունեցող անձի կամ մարմնի կողմից,
2) փաստաթուղթը չի համապատասխանում տվյալ փաստաթղթի համար սահմանված ձևաչափին,
3) փաստաթուղթը ապոստիլով վավերացման ենթակա չէ,
4) փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու մասին դիմումը ներկայացվել է սույն օրենքի և փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգի խախտմամբ,

5) անընթեռնելի են փաստաթուղթը ստորագրող անձի պաշտոնական դիրքի մասին տվյալները, վերջինիս ստորագրությունը, փաստաթուղթը հաստատող կնիքը կամ դրոշմակնիքը,
6) փաստաթուղթը վնասված է, պահպանված չէ փաստաթղթի ամբողջականությունը, փաստաթղթի վրա առկա են անթույլատրելի գրառումներ,
7) չեն ներկայացվել փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, սույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը,
8) փաստաթուղթը ներկայացվելու է Կոնվենցիային չանդամակցող երկիր,
9) փաստաթուղթը ակնհայտ կեղծ է:

Հոդված 6. Ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթուղթը կազմող և տրամադրող մարմնի կողմից տեղեկությունների տրամադրում

1. Ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթ կազմող և տրամադրող մարմինները և պաշտոնատար անձիք արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն են ներկայացնում իրենց կողմից կազմվող պաշտոնական փաստաթուղթը հաստատող պաշտոնատար անձի, վերջինիս պաշտոնեական դիրքի, պաշտոնավարման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա ստորագրության և պաշտոնական փաստաթուղթը հաստատող կնիքի, դրոշմակնիքի նմուշները: Պաշտոնական փաստաթղթի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ձևանմուշ սահմանված լինելու դեպքում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանն է տրամադրվում նաև այդ ձևանմուշը:

2. Արդարադատության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանը պաշտոնական փաստաթղթի ձևանմուշի, այն կազմող անձի, վերջինիս պաշտոնեական դիրքի, պաշտոնավարման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկությունների, նրա ստորագրության և պաշտոնական փաստաթուղթը հաստատվող կնիքի, դրոշմակնիքի նմուշների տրամադրման կարգը, այդ տեղեկությունների պահպանման պայմանները և ժամկետները սահմանում է Կառավարությունը:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
Առաջինից երկրորդ ընթերցում կատարված փոփոխությունների

Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-736-16.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՊՈՍՏԻԼՈՎ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կազմված և տրված պաշտոնական փաստաթղթերի՝ «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված ապոստիլով վավերացնելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) Ապոստիլ՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված թղթային կամ էլեկտրոնային հավաստագիր, որը հավաստում է պաշտոնական փաստաթուղթը ստորագրող անձի պաշտոնեական դիրքի, նրա ստորագրության, փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմակնիքի իսկությունը:

2) Պաշտոնական փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, վարչական և այլ մարմինների, այդ մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև նոտարների կողմից իրենց պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում թղթային կրիչի կամ էլեկտրոնային ձևաչափով կազմված և տրամադրված փաստաթղթեր:

Հոդված 3. Պաշտոնական փաստաթղթերի ապոստիլով վավերացման գործընթաց

1. Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են Կոնվենցիային անդամակցող պետությունների տարածքում:

2. Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից կազմված և տրված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացման ենթակա չեն:

3. Հայաստանի Հանրապետությունում կազմված և տրված պաշտոնական փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունում ապոստիլով վավերացվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ~~Արդարադատության նախարարության~~ կողմից, բացառությամբ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման, հետախուզման և դատվածության բացակայության մասին տեղեկանքների, որոնք ապոստիլով վավերացվում են արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ~~Արտաքին գործերի նախարարության~~ կողմից:

4. Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ներկայացված պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացվում են արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ~~Արտաքին գործերի նախարարության~~ կողմից:

5. Պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու համար դիմում ներկայացնելու կարգը, ապոստիլի ձևանմուշը, տեսակները, վավերապայմանները, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգը գործածելու, տվյալները պահպանելու, ոչնչացնելու ժամկետները և կարգը, «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանը վարելու, օգտագործելու և տեխնիկական ապահովումը իրականացնելու կարգը, ինչպես նաև ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթղթերի ցանկը սահմանվում է արդարադատության և արտաքին գործերի ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարների համատեղ հրամանով~~Արդարադատության նախարարի և Արտաքին գործերի նախարարի համատեղ հրամանով~~:

6. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված չափով և կարգով:

7. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու մասին դիմումին կից ներկայացվում են դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը:

8. Այլ անձին պատկանող պաշտոնական փաստաթուղթը երրորդ անձանց կողմից այն ապոստիլով վավերացնելու նպատակով դիմում ներկայացնելիս լիազորագիր չի պահանջվում:

9. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, եթե «Էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միասնական շտեմարանում բացակայում են ապոստիլով վավերացնելու համար ներկայացված պաշտոնական փաստաթուղթը ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնավարման, պաշտոնեական դիրքի, ստորագրության, կնիքի կամ դրոշմակնիքի վերաբերյալ տեղեկությունները:

11. Սույն հոդվածի 10-րդ մասում նշված դեպքերում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանԱրդարադատության նախարարության կողմից հարցում է կատարվում պաշտոնական փաստաթուղթը տրամադրած մարմնին՝ այն կազմող և հաստատող անձի վերաբերյալ տեղեկությունները, ստորագրության, կնիքի կամ դրոշամակնիքի նմուշները ստանալու նպատակով, որը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված փաստաթուղթը վավերացվում է ապոստիլով:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված մարմինները հայցվող տեղեկությունները տրամադրում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության Արդարադատության նախարարությանը հարցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

13. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու ժամկետի երկարաձգման մասին դիմողը տեղեկացվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ փոստային նամակով, կամ իր կողմից տրամադրված կապի այլ միջոցներով:

14. Ապոստիլով վավերացման ենթակա չեն՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարված փաստաթղթերը,

2) առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերը:

Հոդված 4. Օտարերկրյա պետության կողմից կազմված փաստաթղթի վավերականությունը Հայաստանի Հանրապետությունում

1. Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասու մարմինների՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իրենց լիազորությունների շրջանակներում տրված փաստաթղթերը, որոնք վավերացված են ապոստիլով, Հայաստանի Հանրապետության տարածքում համարվում են վավեր՝ առանց հյուպատոսական վավերացման կամ այլ լրացուցիչ օրինականացման:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված փաստաթղթերի ապոստիլով վավերացված լինելը պարտադիր է, եթե Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ կամ Հայաստանի Հանրապետության միջազգային այլ պայմանագրերով վերացվել, պարզեցվել է օրինականացման ընթացակարգը կամ փաստաթուղթը ազատվել է օրինականացումից:

Հոդված 5. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու դիմումի մերժման հիմքեր.

1. Պաշտոնական փաստաթուղթն ապոստիլով վավերացնելու դիմումը մերժվում է, եթե՝

10) փաստաթուղթը պատրաստվել կամ հաստատվել, կամ կնիքվել է դրա լիազորությունը չունեցող անձի կամ մարմնի կողմից,

11) փաստաթուղթը չի համապատասխանում տվյալ փաստաթղթի համար սահմանված ձևաչափին,

12) փաստաթուղթը ապոստիլով վավերացման ենթակա չէ,

13) փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու մասին դիմումը ներկայացվել է սույն օրենքի և փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգի խախտմամբ,

14) անընթեռնելի են փաստաթուղթը ստորագրող անձի պաշտոնական դիրքի մասին տվյալները, վերջինիս ստորագրությունը, փաստաթուղթը հաստատող կնիքը կամ դրոշմակնիքը,

15) փաստաթուղթը վնասված է, պահպանված չէ փաստաթղթի ամբողջականությունը, փաստաթղթի վրա առկա են անթույլատրելի գրառումներ,

16) չեն ներկայացվել փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, սույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը,

17) փաստաթուղթը ներկայացվելու է Կոնվենցիային չանդամակցող երկիր,

18) փաստաթուղթը ակնհայտ կեղծ է:

Հոդված 6. Ապոստիլով վավերացվող պաշտոնական փաստաթուղթը կազմող և տրամադրող մարմնի կողմից տեղեկությունների տրամադրում

1. Ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթ կազմող և տրամադրող մարմինները և պաշտոնատար անձիք արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանն~~Արդարադատության նախարարություն~~ են ներկայացնում իրենց կողմից կազմվող պաշտոնական փաստաթուղթը հաստատող պաշտոնատար անձի, վերջինիս պաշտոնական դիրքի, պաշտոնավարման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա ստորագրության և պաշտոնական փաստաթուղթը հաստատող կնիքի, դրոշմակնիքի նմուշները: Պաշտոնական փաստաթղթի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ձևանմուշ սահմանված լինելու դեպքում արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանն~~Արդարադատության նախարարություն~~ է տրամադրվում նաև այդ ձևանմուշը:

2. Արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ~~Արդարադատության նախարարությանը~~ պաշտոնական փաստաթղթի ձևանմուշի, այն կազմող անձի, վերջինիս պաշտոնական դիրքի, պաշտոնավարման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկությունների, նրա ստորագրության և պաշտոնական փաստաթուղթը հաստատվող կնիքի, դրոշմակնիքի

նմուշների տրամադրման կարգը, այդ տեղեկությունների պահպանման ~~պայմանների~~ պայմանները և ~~ժամկետների~~ ժամկետներըկարգը, սահմանում է Կառավարությունը:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԱՊՈՍՏԻԼՈՎ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» **ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «կողմից» բառի հետո լրացնել «,բացառությամբ օտարերկրյա պետություններ ներկայացնելու համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման, հետախուզման և դատվածության բացակայության մասին տեղեկանքների, որոնք ապոստիլով վավերացվում են Արտաքին գործերի նախարարության կողմից:»	Ընդունվել է Նախագծով, դատվածության և հետախուզման առկայության մասին տեղեկանքի տրամադրումը վերապահվում է Արտաքին գործերի նախարարությանը:	Ընդունվել է
2.		**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասի «ցանկը» բառից հետո բովանդակությունը փոփոխել հետևյալ կերպ. «սահմանվում է Արդարադատության նախարարի և Արտաքին գործերի նախարարի համատեղ հրամանով» բառերով	Ընդունվել է Համատեղ հրամանով սահմանվելու է ապոստիլով վավերացվող փաստաթղթերի հստակ անվանացանկը, ապոստիլի ձևաթուղթը,	Ընդունվել է

				«էլեկտրոնային ապոստիլ» միասնական էլեկտրոնային կառավարման համակարգից, շտեմարանից օգտվելու, այն վարելու և այլ ընթացակարգերը:	
3.		**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածը լրացվում է նոր մասով հետևյալ բովանդակությամբ. « Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններ ներկայացված պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացվում են Արտաքին գործերի նախարարության կողմից:»	Ընդունվել է Նախագծով ՀՀ պաշտոնական փաստաթղթերի բոլոր տեսակների ապոստիլով վավերացնելու իրավասությունը վերապահվում է Արտաքին գործերի նախարարությանը, եթե փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու դիմումները ներկայացվել են օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություններին և դյուպատոսական հիմնարկներին	Ընդունվել է
4.		**Նախագծի 3-րդ հոդված**	Հանել Նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ մասը:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթի համաձայն պաշտոնական փաստաթուղթի վավերացումը, ի տարբերություն գործող կարգով սահմանված 2–օրյա ժամկետի, նախատեսվում է իրականացնել մեկ օրվա ընթացքում: Հետևաբար ժամկետի կրճատմամբ անհրաժեշտությունը վերանում է:	Ընդունվել է
5.		**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ բավանդակությամբ	Ընդունվել է Հաշվի առնելով, որ	Ընդունվել է

			«7. Պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու մասին դիմումին կից ներկայացվում են դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, ապոստիլով վավերացման ենթակա պաշտոնական փաստաթուղթը, սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը:»	Նախագծով արդեն իսկ կրճատվել է պաշտոնական փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար 2-օրյա ժամկետը մեկ օրով, ապոստիլի հաստատման ժամկետի կրճատման համար լրացուցիչ վճարման կատարումը հիմնավորող անդորրագրի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է: Պետական տուրքի վճարումը կարող է կատարվել նաև հեռավար կարգով, որի դեպքում վճարման անդորրագիր ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է, որի համար անդորրագիր բառը փոխարինվում է վճարման հաստմամբ (փաստաթղթային կամ էլեկտրոնային վճարման վավերապայմանների նշումով): Մանրամասները սահմանվելու են համատեղ հրամանով: Արդյունքում Նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը փոփոխվել է:	
6.		**Նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «չեն ներկայացվել	Ընդունվել է Վերը նշված բաժնում հիշատակված հիմնավորման	Ընդունվել է

			փաստաթուղթը ապոստիլով վավերացնելու համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, սույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պետական տուրքի վճարման հավաստումը,»	տրամաբանությամբ ժամկետի կրճատումը հավաստող վճարման անդորրագրի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է, հետևաբար դրա բացակայությունը չի կարող հանդիսանալ դիմումի մերժման հիմք	
7.		**Նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասով նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել մեկ ամիս հետո	Ընդունվել է Տեխնիկապես հնարավոր չէ հրապարակման պահից կիրառել օրենքի դրույթները ենթաօրենսդրական ակտերի բացակայության պայմաններում, որոնց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված	Ընդունվել է
. 8.		**Նախագիծ**	Առաջարկվում է հետևյալ տեխնիկական փոփոխությունները. 1.Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը համընկնում է Նախագծի վերնագրին: Անհրաժեշտ է փոխել 2. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում Հայաստանի Հանրապետության կառավարության փոխարեն նշել Կառավարություն 3. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «հաստատված» բառը փոխարինել «վավերացված» բառով 4. Նախագծի 7-րդ հոդվածը ավելացնել	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է

			«մաս» բառը		
9.	**«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Սուրեն Գրիգորյան**	**Նախագիծ**	Առաջարկվում է նախագծում «Արդարադատության նախարարություն» բառերը փոխարինել « արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է